«ԼՐԱԲԵՐԻ» 30-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահությունը 1970 թ. ապրիլի 1-ին ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների «Լրաբեր» («Տեղեկագիր») ամսագրի 30-ամյակի առթիվ ընդունեց որոշում (Արձանագրություն № 8 (621), հարց 40): ԳԱ նախագահության որոշման մեջ ասված է.

«1970 թ. հունիսին լրանում է հասարակական գիտությունների «Լրաբեր» («Տեղեկագիր») ամսագրի 30 տարին: Ամսագիրն իր էջերում գիտական պատշաճ բարձրությամբ լուսաբանել է հասարակական գիտությունների զարգացման կարևոր պրոբլեմները, մեծապես նպաստել է հայագիտության զարգացմանը, մարքսիստական-լենինյան տեսության ոգով արծարծել է սոցիալիստական հասարակական գիտությունների զարգացման, օրինաչափությունները և կարևոր խնդիրները:

Ամսագրի էջերում լայն տեղ են գտել հայ մշակույթի, գիտության ու կուլտուրայի հանգուցային հարցերը: Ամսագիրը կարևոր դեր է խաղացել հասարակական մտքի զարգացման բնագավառում, մշտապես գտնվել է կոմունիստական կուսակցության մարքս-լենինյան գաղափարախոսության պրոպագանդման առաջավոր դիրքերում:

«Լրաբերի» 30-ամյա տարելիցի կապակցությամբ ԳԱ նախագահությունը որոշում է.

1. Հրավիրել ամսագրի ընթերցողների և նրան աշխատակցող հեղինակների հանդիսավոր նիստ:

2. Հանձնարարել ԳԱ ֆունդամենտալ գրադարանի դիրեկցիային՝ նախապատրաստել և 1971 թ. տպագրելու հասար հրատարակչությանը հանձնել «Լրաբեր»-ի 30 տարիների (1940—1970 թթ.) նյութերի մատենագրությունը:

3. Հանրապետական մամուլում և գիտությունների ակադեմիայի պարբերականներում հրապարակել նյութեր նվիրված ամսագրի 30-ամյակին:

4. Ամսագրի յուրաքանչյուր համարի (յոթ հեղինակային մամուլ) հոնորարը սահմանել 600 ռուբլի:

5. Հաշվի առնելով, որ «Լրաբերը» («Տեղեկագիր») ակադեմիայի ամենից հին պարբերականն է, ամսագիրը ներկայացնել ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով պարգևատրման:

6. Նշել ամսագրի խմբագիրներ Ս. Կ. Կարապետյանի, Հովս. Օրբելու, Մ. Գ. Ներսիսյանի, Ա. Ռ. Հովհաննիսյանի, Հ. Գ. Բատիկյանի, Մ. Պ. Աղայանի, Խ. Ն. Մոմջյանի, Գ. Խ. Ստեփանյանի, Հ. Գ. Ալանյանի, Գ. Ա. Աբովի, Հ. Գ. Ինճիկյանի և պատասխանատու քարտուղարներ Գ. Ն. Հովհաննիսյանի, Կ. Ս. Խուդավերդյանի, Ռ. Գ. Սահակյանի, Մ. Լ. Հովհաննիսյանի արդյունավետ աշխատանքը:

7. Խրախուսել խմբագրության և ամսագրի հրատարակման գործին անմիջականորեն մասնակցող. տպարանի և հրատարակչության աշխատողներին (խմբագրության պատասխանատու քարտուղար Միքայել Հակոբյանին, ավագ խմբագիր Աստղիկ Ալանյանին, վերստուգիչ սրբագրիչ Փիրուզ Մաղանյանին, մեքենագրուհի Գալանի Մանուկյանին պարգևատրել մեկ ամսվա աշխատավարձի չափով. նախագահության կողմից հայտնել շնորհակալություն և երկարամյա աշխատանքի համար ներկայացնել Արճմիության կենտկոմի պատվոգրով պարգևատրելու. ամսագրի գլխավոր խմբագրի տեղակալ Պիոն Հակոբյանին, հրատարակչության դիրեկտոր Սոս Գևորգյանին, տպարանի դիրեկտոր Հրանտ Գորոյանին, ցեխի վարիչներ Հակոբ Շեկոյանին, Գրիգոր Յումշաշիկյանին, պարբերականների հրատարակության տեսուչ Մարգարիտա Դալվաղյանցին՝ երկարամյա աշխատանքի համար հայտնել շնորհակալություն և ներկայացնել Արճմիության կենտկոմի պատվոգրով պարգևատրման. տպարանի աշխատողներ՝ տեխնիկական խմբագիր Լենորոշ Ազիզբեկյանին, լինոտիպիստ Սիրուշ Բաբայանին, էջկազմ Հակոբ Կարագյոզյանին, ցինկոգրաֆ Սարգիս Գյուդինյանին, տպագրիչ Պետիկ Այնաջյանին և սրբագրիչ Գարեգին Սարգսյանին պարգևատրել մեկ ամսվա աշխատավարձի չափով և ներկայացնել Արճմիության կենտկոմի պատվոգրով պարգևատրման)»: